



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 22 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2025

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Յոյս իմ եւ դու տէր քաւիչ յանցանաց իմոց.

մի անտես առնէր զբոլոր խումն արտասուաց իմոց. ողորմեա ինձ աստուած:

ԱՊՈԹՔ

Ով Հայր, դուն որ գթառատ ես, եւ ամէն տեսակի միտքարութիւն պարգեւելով մեզ կը միտքարես մեր բոլոր նեղութիւններուն մէջ: Այս պահուն լսէ քու ծառաներուդ պաղատալից խնդրանքը, եւ ընդունէ մեր աղաչանքը: Դուն՝ որ բարերար ես, ջնջէ մեր յանցանքներուն արժանի ահաւոր պատիժը: Ներողամիտ գտնուէ եւ լսէ մեզ, քանի որ մեր մեղքերը: Արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու քեզ՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարե-խօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 88

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂԱՂԱԿ

Ով Տէր, փրկիչ Աստուած,
ցերեկը կ'աղաղակեմ քեզի, գիշերը դիմացդ կը հեծեծեմ:
Ընդունէ աղօթքս, ականջ տուր հեծեծանքիս.
որովհետեւ չարչարանքներով ողորուեցայ, մահուան դուռը հասայ:
Կարծես արդէն մահափոս դրուած ըլլամ,
անօգնական մնացեր եմ ամենեւին, մեռելներուն մէջ լքուած.
գերեզմանին մէջ պառկող սպաննուած այն մարդոց պէս՝
որ դուն այլեւս չես յիշեր, որոնց այլեւս չես օգներ:
Զիս մահափոսին խորը նետեցիր, մահուան խաւար անդունդին մէջ:
Գլխուս թափեցիր սրտմտութիւնդ, որ ալիք առ ալիք ծանրացաւ վրաս:
Իմ ծանօթներս ինձմէ հեռացուցիր, զիս պժգալի դարձուցիր անոնց աչքին.
միմակութեանս մէջ բանտուեցայ, եւ ելի չունիմ:
Աչքերս տկարացան տառապանքներէս, օրն ի բուն քեզի կ'աղաղակեմ,
Տէր, ձեռքերս բացած՝ քեզի կ'աղօթեմ:
Մեռելներուն համար հրաշք կ'ընե՞ս դուն,
ստուերները կրնա՞ն ելլել քեզ գոհաբանել:
Գերեզմանին մէջ մէկը կը խօսի՞՞ քու սիրոյդ մասին,
հաւատարմութեանդ մասին կը պատմուի՞՞ կորուստի այդ վայրին մէջ:
Հոն՝ խաւարին մէջ՝ հրաշքներդ կը ճանչցուի՞ն,
մոռացութեան այդ երկրին մէջ արդար գործերդ կը գիտցուի՞ն:
Բայց ես, ով Տէր, քեզի կ'աղաչեմ, առտու կանուխէն
իմ աղօթքս քեզի կը ներկայացնեմ:
Ինչո՞ւ կը մերժես զիս, Տէր,
ինչո՞ւ ինձմէ երեսդ կը դարձնես:
Մանկութենէս ի վեր կը տառապիմ, եւ ահա մահամերձ եմ,
քու ահաւոր պատիժէդ՝ շուարած եւ աննրկած:
Բարկութիւնդ գլխուս թափեցիր,
սարսափելի հարուածներդ զիս ոչինչի վերածեցին:
Հեղեղի պէս՝ օրն ի բուն անոնք շուրջս կը դառնան,
ամէն կողմէ միասնաբար զիս պաշարելով:
Սիրելիներս ու բարեկամներս ինձմէ հեռացուցիր.
միայն խաւարը մնաց ինծի ընկեր:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂԱՂԱԿ

Սաղմոս մը, որ կը պարկանի բոլոր անոնց, որոնք այսպիսի վիճակի մէջէն կ'անցնին: Սաղմոս մը, որ կը դառնայ ներկայացուցիչ խօսնակը մեզմէ իւրաքանչիւրին: Սաղմոս մը, որ կը յիշեցնէ, թէ կեանքը միշտ ալ կանաչ կամ վարդագոյն չէ, այլ՝ նեղութիւններով լեցուն, նոյնիսկ Աստուածապաշտ մարդուն համար: Քրիստոս առիթով մը կը յիշեցնէ ըսելով. "Նեղութիւններ կան ու պիտի ունենաք, բայց դուք քաջալերուեցէք, ձեր սրտերը թող չխռովին": Սաղմոս մը, որ կարծէք միայն յուսահաւորութեամբ եւ հորե-տեսութեամբ լեցուն: Ի վերջոյ, Սաղմոս մը, որ նաեւ մարգարէական շունչով գրուած, կը ներկայացնէ Քրիստոսի վիճակը: Անցնինք քոյկ առ քոյկ բացատրութեան: Առաջին իսկ բառերը յոյս կը ներշնչեն, հակառակ իր բացասականութեան. "Ով Տէր, փրկիչ Աստուած": Արդէն Սաղմոսերգուին մտքին մէջ յարակոյթիւն մը կայ, որոյ որ կ'ուղղէ իր աղօթքը, փրկիչ է: Ինչպիսին ալ ըլլան պարագաները ու անոնց ծանրութիւնը, փրկիչ մը ունի, որ կրնայ փրկել: Ան աղօթքի վիճակի մէջ է ցերեկ ու գիշեր: Մանաւանդ՝ յարակ է հասցեատերը՝ "Քեզի": Ընդունէ աղօթքս եւ ականջ քոյկ աղաչանքիս: Որովհետեւ այնքան ծանրացեր է վիճակը, եւ արդէն հասեր է մահուն դուռը, եւ կարծես մահափոս դրուածի պէս եւ անօգնական: Կը ներկայացնէ թէ ինչպէս Աստուած իր սրբմարտիկները թափեր է գլխուն: Ծանօթները իրմէ հեռացած, միակողմանի մէջ եւ ելք չունի: Աջերը լալէն փկարացած: 10-12 համարները հարցումներ կ'ընեն, թէ արդեօք մեռելներուն համար հրաշք կրնա՞յ ընել Տէրը, կամ անոնք կրնան զինք գոհաբանէ՞լ: Աստուծոյ սիրոյն մասին արդեօք մէկը կը խօսի՞: Կամ հաւաքարմութեան մասին կը պարմուի՞: Այլ խօս-քով, անոնք յաւեր մեռած, բայց ընդհակառակը, հարցումներ են, որոնց պատասխանը յարութեան յոյսի աւերիսն է: Սաղմոսերգուն ունի այնպիսի քաջաւորութիւն, որ կարծես քերը մերժեր է զինք եւ երես դարձուցած: Ան նաեւ կը ներկայացնէ, որ մանկութենէ ի վեր կը տառապի, եւ մահամեռն, ու Աստուծոյ ահաւոր պարիժէն շուարած եւ անճրկուած: Կնկնել նոյն արտայայտութիւնը, թէ Աստուած Իր բարկութիւնը գլխուն թափեց, հարուածները ոչինչի վերածեցին, սիրելիներն ու բարեկամները իրմէ հեռացուց, մայն խաւարը եղաւ իրեն ընկեր: Եկեղեցւոյ հայրերը այս Սաղմոսին մէջ տեսած են մարգարէական այն պատգամը կապուած Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքի վերջին հանգրուանին: Ուր Աստուծոյ պարիժը մարդուն նկատմամբ թափելով Քրիստոսի վրայ, որ յանձն առաւ այդ դա-տապարտութիւնը, խաչի մահը, Անոր անարգուիլը, մանկութենէն ի վեր կրած տառապանքը: Ահա թէ ինչու Եբրայեցւոց նամակին մէջ 4:14-16 կը գրէ. "Հետեւաբար ամուր պահենք մեր դաւանած հաւաքը, որովհետեւ հիմա երկինքի սրբարանը մտած մեծ Քահանայապետ մը ունինք, Յիսուսը, Աստուծոյ Որդին: Քահանայապետ մը, որ կրնայ հասկնալ մեր փկարտութիւնները եւ կարեկցիլ, քանի ինչ բաներով որ մենք կը փորձուինք՝ ինք եւս փորձուած է, առանց սակայն մեղանչելու: Ուստի համարձակօրէն մօտենանք Աստուծոյ շնորհքի արթուն, ողորմութիւն գրնելու եւ շնորհք ստանալու համար, որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշտութեան պարագային":

**Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:**